# Տ. ՄԱՐԿՈՍ ՔԱՀԱՆԱ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՒԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(12 դեկտեմբերի, 2010թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր հատկանշական օր է ինձ համար, որովհետեւ քառասուն օրեր առաջ տասնհինգ եղբայրներիս հետ միասին Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում քահանայության կոչվեցինք ազգիս Վեհափառ Հայրապետի փնօրհնությամբ. քառասուն օրեր անցան, եւ այսօր մեր անդրանիկ Պատարագն է: Այսօր ուզում եմ շնորհակալության խոսքս հայտնել Վեհափառ Հայրապետին, ում հայրախնամ հոգածության ներքո հասակ առանք եւ ձեւավորվեցինք որպես հոգեւորական, շնորհակալություն հայտնել նաեւ Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսչությանը, դասախոսական եւ աշխատանքային ողջ անձնակազմին, որ իրենց լուման են ներդրել մեր ձեւավորման եւ քահանայական կոչմանը հասնելու գործում: Շնորհապարտ եմ նաեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչությանը: Չեմ կարող երախտիքս չհայտնել նաեւ Արագածոտնի թեմի բարեխնամ առաջնորդ Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանին, որ մեր հոգեւոր հայրը եղավ եւ ձեռնադրության շնորհը պարգեւեց մեզ՝ տասնվեցիս:

Այսօրվա ավետարանական ընթերցվածը պատմում է հետեւյալի մասին. սրանից երկու հազար տարի առաջ Տեր Հիսուս Քրիստոսը, շրջապատված փարիսեցիներով, օրենսգետներով եւ իր աշակերտներով, զրույցի է բռնվում եւ մի առակ է պատմում եւ ասում, թե մեկը ընթրիք էր պատրաստել եւ այդ ընթրիքի համար իր ծառային ուղարկեց, որպեսզի սա կանչեր ընթրիքի մասնակիցներին: Ծառան գնում է առաջին կանչվածի մոտ եւ ասում, որ իր տերը կանչում է նրան, եւ թե ամեն բան պատրաստ է միասին խրախճանք անելու համար, սակայն սա պատասխանում եւ ասում է, որ ինքը հրաժարվում է, քանի որ ագարակ է գնել եւ պետք է գնա ու տեսնի այն: Ծառան գնում է հաջորդ կանչվածի մոտ, այս մեկն էլ ասում է, թե ինքը հենց նոր հինգ լուծ եզ է գնել եւ պետք է գնա փորձելու: Ծառան գնում է երրորդ կանչվածի մոտ, եւ սա առանց երկար մտածելու ասում է, թե կին է առել, ամուսնացել է եւ չի կարող գալ ու խնդրում է իրեն հրաժարված համարել: Երբ ծառան վերադառնում եւ հայտնում է այս ամենն իր տիրոջը, տերը սաստիկ բարկանում է եւ հրամայում, որ ծառան դուրս գա եւ քաղաքի բոլոր աղքատներին, բոլոր ծանոթ-անծանոթ մարդկանց, ում որ տեսնի, հրավիրի ներս: Հետո տեսնում են, որ անգամ այս դեպքում դեռ շատ տեղ կա. այս անգամ հրամայում է քաղաքի պարիսպներից դուրս գալ եւ ներս կանչել խեղանդամներին, հիվանդներին, բոլոր այն մարդկանց, ովքեր օտարված են հասարակությունից եւ ավելացնում, որ այն մարդիկ, ովքեր հրաժարվեցին, իր ընթրիքից չեն ճաշակի: Առաջին հայացքից առակն անարդար է թվում. մարդուն հրավիրել էին ճաշկերույթի, սակայն իրեն հարմար չէր, ագարակ էր գնել, պետք է գնար տեսնելու, մյուսը եզներ էր գնել եւ երրորդն էլ կին էր առել: Սակայն, եթե մեզանից որեւէ մեկը ծնված լիներ սրանից երկու հազար տարի առաջ, նա հստակ կիմանար, որ տվյալ ժամանակաշրջանում, երբ ինչ-որ մեկը ընթրիք էր կազմակեր-

պում կամ հարսանյաց արարողություն կատարում, ապա նախապես զգուշացնում էր բոլոր հրավիրյալներին: Այսինքն՝ այս մարդիկ, ովքեր հրաժարվեցին, նախապես տեղեկացված չէին, որ այսինչ մարդը խնջույք է կազմակերպելու եւ իրենց էլ հրավիրելու է: Խնդիրն այն էր, որ երբ ծառան գալիս էր եւ ասում, որ իր տերը հրավիրում է խնջույքի, չէր նշում, թե երբ էր լինելու այդ խնջույքը: Հրեաները կարծում էին, որ եթե մեկը ցանկանար ներկա լինել իր մերձավորի ուրախությանը, նա անհամբեր կսպասեր այդ օրվան եւ ամեն գնով կմասնակցեր խնջույքին: Երբ այս ամենը պարզ է դառնում, մեզ համար առակն այլ իմաստ է ստանում: Առակում խնջույքի հրավիրող տանտերը խորհրդանշում է Աստծուն, իսկ հրավիրվածները մարդիկ են, այդ թվում նաեւ մենք. չէ՞ որ մենք եւս Աստծո կողմից հրավիրված ենք իր իսկ արքայությանը մասնակից լինելու: Աստված մեզ իր փառքի մեջ հավիտենապես լինելու է հրավիրել, սակայն մենք էլ առակում հրավիրվածների նման անտեղյակ ենք. չգիտենք ո՛չ օրը, ո՛չ ժամը, թե երբ կլինի այն: Նոր Կտակարանում Աստծո արքայությունը շատ անգամներ նմանեցվում է խնջույքի: Հրեաներն անգամ կարծում էին, որ երբ Աստված իր թագավորությունը հաստատի, այնտեղ խնջույքի մեծ սեղան պետք է բացվի, որտեղ համադամ ուտելիքներ, պես-պես խորտիկներ պետք է լինեն: Այս առակը պատմելով՝ Քրիստոսն ընդգծում էր, որ Աստծո արքայությունը իրապես ոչ թե խնջույքի վայր է, այլ ուրախության, ցնծության: Շատերն այն թյուր կարծիքն ունեն, թե քրիստոնյան պետք է մռայլ լինի, թախծոտ, լուրջ դեմքով, մի անկյուն քաշված, որպեսզի ակնհայտ լինի նրա քրիստոնյա լինելը: Սիրելինե՛րս, ցավում եմ, բայց իրականությունն այլ է: Դեռեւս Հուլիանոս Ուրացող կայսրը մեզանից մոտ մեկ ու կես հազարամյակ առաջ ասում էր, թե քրիստոնյաները մարդիկ են, ում համար արեւը շողում է, բայց իրենք փախչում են նրանից: Դեռ վաղուց եղել են քրիստոնյաներ, ովքեր փոխրադեմ, սուգի մեջ, անընդհատ ընկճված վիճակում են եղել: Տեսնե՛ք, ես չեմ խոսում ապաշխարության մեջ եղողի հոգեւոր վիճակի մասին. այն մարդը, ով ապաշխարում է, ով զղջում է իր գործած մեղքերի համար, թողություն է խնդրում Աստծուց, նա կարող է ե՛ւ գլուխը կախ լինել, ե՛ւ տխուր լինել, ե՛ւ մի անկյուն քաշված լինել, սակայն սա երբեք չպետք է վերածվի կենսակերպի, ապրելաձեւի: Քրիստոս իր առակով ցույց է տալիս մեզ, որ Աստծո արքայությունը, երկնքի արքայությունը ուրախության եւ ցնծության մի վայր է. Աստծո հետ լինելը երջանկություն է մեզ համար:

Առաջին կանչվածը, որ արտ էր գնել, ըստ Հայ Եկեղեցու սուրբ հայրերի, խորհրդանշում է բոլոր այն մարդկանց, ովքեր կապված են նյութական աշխարհի հետ, որոնց համար իրենց կենցաղը, նյութական ապահովվածությունը ավելի կարեւոր են, քան Աստծո թագավորությունը, երկնքի արքայությունը: Այս մարդիկ կառչած են այն ամենից, ինչն ի վերջո հող է դառնալու եւ ոչնչանալու է: Երկրորդ հրավիրվածը, որ եզներ էր գնել եւ պետք է գնար փորձարկելու, մեր սրբազան հայրերի մեկնության համաձայն, խորհրդանշում է մարդկանց այն տեսակը, որը ամեն նոր բանի հետեւից վազում է: Վերջինս նոր եզներ էր գնել եւ պետք է գնար փորձարկելու: Երբեմն մենք էլ մեր կյանքի ընթացքում երբ մի նոր բան ենք ձեռք բերում, ողջ էությամբ տարվում ենք դրանով եւ մոռանում այն, ինչը մեզ համար առավել հաստատուն ու մնայուն պետք է լիներ: Երբեմն մեր նոր մեքենան, մեր նոր հեռախոսը սկսում է այն աստիճան գրավել մեր ուշադրությունը, որ նույնիսկ մոռանում ենք Աստծո հանդեպ ունեցած մեր սիրո մասին: Ես մի մարդու էի ճանաչում, որ ամեն կիրակի Եկեղեցի էր գա-

լիս, եւ մի քանի շաբաթ նրան Եկեղեցում չտեսնելով՝ հարցրեցի թե ինչ էր պատահել, ինչո՞ւ չէր գալիս, նա ինձ պատասխանեց, որ մեքենա է գնել եւ կիրակի օրերին ընտանիքի հետ միասին քաղաքից դուրս են գնում: Մեքենա ունենալը վատ բան չէ, ոչ ոք դրան դեմ չէ, պարզապես մենք դեմ ենք այն ամենին, ինչը մեզ հեռացնում է Աստծուց. ոչինչ չպետք է ի զորու լինի հեռացնելու մեզ Աստծուց: Եւ երրորդ կերպարը, որը պատասխանում է՝ կին եմ առել եւ չեմ կարող գալ, խորհրդանշում է այն մարդկանց, ովքեր իրենց ընտանիքին եւ տանը ավելի մեծ ուշադրություն են դարձնում, քան Եկեղեցուն եւ Աստծուն: Ընտանիքը մեր սուրբ հայրերի կողմից միշտ նմանեցվել է փոքր եկեղեցու, համարվել է եկեղեցու մանրակերտը, որի կենտրոնում պետք է լինի Աստված: Եթե մի ընտանիք ուզում է երջանիկ ու խաղաղ ապրել, հաշտ ու համերաշխ, սիրո մթնոլորտում ու միեւնույն ժամանակ իր կենտրոնում չունի Աստծուն, ապա վստահ եղեք, որ այն նպատակների իրականացման ճանապարհը քարքարոտ կլինի: Հրեական օրենքի համաձայն, այն մարդը, ով նոր էր ամուսնացել, առաջին մեկ տարին ազատված էր ճ՛ւ զինվորական ծառայությունից, ճ՛ւ հասարակական որեւէ ծառայություն մատուցելուց. նա պետք է մնար իր տանը եւ ուրախացներ իր կնոջը. Երկրորդումն Օրինաց գրքում խոսվում է այս մասին: Հնարավոր է, որ այս մարդը, որ հրավիրված էր ընթրիքին, նոր էր ամուսնացել եւ հիմնվելով ընդունված օրենքի վրա, հրաժարվում էր ընթրիքին մասնակցելուց: Մենք, սակայն, պիտի հստակ գիտակցենք, որ ցանկացած օրենք լուծվում, վերանում է, երբ Քրիստոսն է մեր առջեւ:

Ցանկանում եմ, որ այսօրվա ավետարանական ընթերցվածը այս երեք կարեւոր կետերը հիշեցնի մեր կյանքի ողջ ընթացքում. առաջին՝ չպետք է կառչել նյութական արժեքներից, այն ամենից, ինչը որ վաղ թե ուշ հող է դառնալու, երկրորդ՝ պետք չէ նորություններ հետեւից վազել եւ գերվել դրանցով եւ, վերջապես, երրորդ՝ ընտանիքը, տունը չպետք է մեզ խանգարի Եկեղեցի գնալ, աղոթել, Աստծուն մերձենալ: Ավետարանում Քրիստոսն ասում էր, որ հաճախ մարդու թշնամիները իր տանից են լինում. անշուշտ, Քրիստոսն իր պատճառներն ուներ այսպես խոսելու, բայց այսօր էլ կան մարդիկ, որոնք անհավատ են, եկեղեցի չեն գալիս եւ միեւնույն ժամանակ արգելում են իրենց ընտանիքի մյուս անդամներին եկեղեցի գնալ, ծիսակատարություններին մասնակցել, ժամերգություններին ներկա գտնվել եւ այլն: Այս առակը թող դաս լինի եւ մտապահենք, որ Աստծո արքայություն տանող ճանապարհից հետ պահող որեւէ արգելք չպետք է լինի: Ավետարանական ընթերցվածի մասին այսքանը:

Վերջում որպես նոր ձեռնադրված հոգեւորական եւ նորաօծ քահանա, ձեզանից խնդրում եմ աղոթել ինձ համար, աղոթել ոչ թե Դավիթի, այլ Տեր Մարկոս քահանայի համար: Իմ կյանքում սխալներ շատ եմ գործել, այս պատճառով խնդրում եմ, որ աղոթեք ինձ համար, աղոթեք, որովհետեւ փորձություններ դեռ շատ են լինելու: Խնդրում եմ աղոթել նաեւ բոլոր նորաօծ քահանաների համար, որովհետեւ նրանք ձեր աղոթքի կարիքը շատ ունեն: Աղոթեք բոլոր հոգեւորականների համար, եթե անգամ չեք ճանաչում նրանց, աղոթեք, եթե անգամ ձեր նախընտրած քահանան չէ, ձեր սիրելի քահանան չէ, որովհետեւ, ցավոք սրտի, մեր մեջ դեռ կան մարդիկ, ովքեր ունեն սիրելի, նախընտրելի եւ ոչ նախընտրելի քահանաներ: Ես ուզում եմ ձեզ հիշեցնել, որ Մովսես մարգարեն ծանրախոս էր, դժվարություն ուներ խոսելու հետ կապված, սակայն Աստված հենց նրան ընտրեց իր գործի համար. ուզում եմ հիշեցնել, որ Եսայի մարգարեն ամեն բան պատրաստ էր տալու, միայն թե Աստված իրեն չընտրեր,

որովհետև ինքն էլ խոսելու խնդիր ուներ, այնինչ Աստված վառվող ածուխով մաքրեց նրա բերանը և պատրաստեց իր գործի համար. ուզում եմ հիշեցնել, որ Պետրոս առաքյալն էլ լինելով գալիլեացի, անտանելի բարբառով էր խոսում (գալիլեացիներին անգամ ժողովարանում թույլ չէին տալիս որևէ բան կարդալ), սակայն Աստված հենց նրան ընտրեց հրեաների առաքյալ: Ի՞նչ եք կարծում` ինչի՞ շնորհիվ էր, որ տասներկու ձկնորսները աշխարհը փոխեցին. պատճառն այն էր, որ Տիրոջ կամքն էր դա: Չեմ կարծում, որ ես աշխարհը պիտի փոխեմ, որովհետև մի ժամանակ ձգտում էի և հետո համոզվեցի, որ անգամ դժվարանում եմ ինքս ինձ փոխել, բայց ամեն դեպքում վստահ եմ, որ ում Աստված ընտրեց իբրև իր գործը կատարողի, մենք պետք է ընդունենք, պետք է սիրենք և աղոթենք նրա համար: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, խաղաղությունը և շնորհները թող ամենքիդ հետ լինեն: Ամեն: